

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այցելել է Ակունք խոշորացված համայնքի բնակավայրեր

Աշխատանքային այցի շրջանակում Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այցելել է Ակունք խոշորացված համայնքի բնակավայրեր և ծանոթացել համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված Կառավարության 2019թ-ի սուբվենցիոն ծրագրերի շրջանակում իրականացվող աշխատանքների ընթացքին: Դրանք այս համայնքում 7-ն են:

Մարզպետն այցելել է Ակունք համայնքի Զատիս բնակավայր, որտեղ խմելու ջրի մայր ջրատարի հիմնանորոգման աշխատանքների 90% արդեն ավարտվել է: Մրցույթը շահել են 27.588.000 դրամով, պետական ֆինանսավորման չափն է 70%, համայնքինը՝ 30%:
Կվերանորոգվի նաև Զատիս բնակավայրի վարչական շենքը՝ ծառայելով նաև որպես համայնքային կենտրոն ու երիտասարդների համար հարթակ՝ իրականացնելու տարբեր սոցիալական և մշակութային ծրագրեր: Ծրագրի նախահաշվային արժեքն է 10.742.659 դր, որից համայնքի ներդրումը՝ 55%: Այստեղ Ռոմանոս Պետրոսյանը հանդիպել է համայնքի ներկայացուցիչների հետ, լսել նրանց առաջարկներն ու մտահոգությունները: Շենքի վերակառուցումը դրական փոփոխություն ու ակտիվություն է մտցնելու համայնքի կյանքում:

Նոր Գյուղ բնակավայրի կոյուղու արտաքին ցանցի հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են: Շահած պայմանագրի արժեքն է 14.700.000 դր, որից 8.085.000 դր պետական ֆինանսավորման չափն է, համայնքինը՝ 6.615.000դր:
Այստեղ կհիմնանորոգվի նաև մանկապարտեզի շենքը: Նախահաշվային արժեքն է 205.722.660դր, որից համայնքի ներդրումը՝ 50%:
Մրցույթը կհայտարարվի մոտ ժամանակներս:

Ընթացքի մեջ են Կապուտան բնակավայրի 1-ին և 2-րդ փողոցների ասֆալտապատման աշխատանքները: Շահած պայմանագրի արժեքն է 36.671.800 դր, պետական ֆինանսավորման չափն է 45%, համայնքի ներդրումը՝ 55%:
Կապուտան բնակավայրում կվերակառուցվի նաև մանկապարտեզի շենքը: Նախահաշվային արժեքը կազմում է 31.336.090 դր, որից համայնքի ներդրումը՝ 15.668.045 դր: Շինարարությունն իրականացնող ընկերության մրցույթը կհայտարարվի արդեն եկող շաբաթ ու աշխատանքները կմեկնարկեն:

Մարզպետն այցելել է նաև Սևաբերդ բարձրլեռնային բնակավայր, որտեղ բնակավայրի զարգացմանն ուղղված ծրագրի շրջանակում կառուցվում է հյուրատուն:
Այս բնակավայրում սուբվենցիոն ծրագրով նախատեսված է Սևաբերդ բնակավայրի զազիֆիկացում: Նախահաշվային արժեքը 57.222.710 դրամ, որից համայնքի ներդրումը՝ 35%:

Այստեղ սփյուռքի մեկենասների և մարզպետի աջակցությամբ վերանորոգվել է 18 աշակերտ ունեցող դպրոցի ինֆորմատիկայի դասասենյակն ու կահավորվել, իսկ ամսվա ավարտին կհամալրվի նոր համակարգիչներով և կհանձնվի շահագործման: